

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆԵՐ

Ազգային պարբերական թերթերը արդէն սոսկալով դուժեցին Քուրեայի երեւումն Տաճկաստանի քանի մի քաղաքներուն մէջ, ինչպէս ՚ի Պօլիս, ՚ի Պուրսայ և այլն։ Բայց մենք հարկ կը համարիմք ծանուցանել, որ ցարդ ամենեւին քուրեական նշան երեւցած չէ Արուսաղէմի և իւր բոլոր շրջակայից մէջ, և ոչ Ալէքսանդրիա, Ալգիրապոս, ՚ի Պերուս և այլն։ Իսկ այսուհետեւ կը յուսանք, որ բընաւ չերեւիր այդ ահարկու հիւրը Պաղեստինի հողին վրայ, որովհետեւ արդէն ամառնային ջերմութիւնները անցան և յաջորդեցին զովագին օդերը։

— Սեր համազգի ուսումնասէր երիտասարդներէն Վ. Թիւրապեան Ալեսարացի, որ Փարիզի բժշկական դըպրոցի մէջ կ'ուսանէր, ուրախութեամբ տեսնելով իւր ուսման ընթացքը և հարցաքննուելով Տօքսոթ-Լեան աստիճան և վկայագիր ստացած է։ Հարցաքննութեան ատենին ներկայացած է իւր մասնաւոր փորձառական գրութեամբով, «Վասնոր-Լեանց վերայ» զոր խիստ յաջողակութեամբ պաշտպանած է բժշկական պայքարման ժամանակ, և ծափահարութեամբ ընդունուելով տըպագրուած է առանձին տետրակի մէջ։ Կը յուսանք որ Վ. Թիւրապեան նորապսակ Տօքսոթն քանի մի ժամանակէն ղկնի կը վերադառնայ ՚ի Տաճկաստան, բժշկական ասպարիզին մէջ փայլելու իւր տաղանդով և հիմնական գիտութեամբ։

— Յունաց Ալէքսանդրիոյ Պատրիարքը, որ օգափոխութեան պատճառաւ Արուսաղէմ կը գտնուէր, ընկերակցութեամբ տեղեւոյ Յունաց

Պատրիարքին և քանի մի եպիսկոպոսաց ու վարդապետաց այցելութեան եկաւ Ս. Լէթոսոյ լճին։ Աստագահին և ապա մեծ հետաքրքրութեամբ աչքէ անցունելով Ս. Լէթոսոյ հատատութիւններն՝ Տպարանն, Ժառանգաւորաց Վարժարանն և այլն, գոհունակութիւն յայտնելով լճին։ Սրբազան Հօրը վերադարձաւ։

— Քաղաքիս բնակիչներէն մի Տաճիկ, իւր կնոջ հետ կը կռուի և ինքնակամ կերպիւ բաժնուելով՝ երկար ժամանակ անխնամ կը թողու իւր տունը։ Ազգական ամուսինը սոյն անխնամ վիճակէն ստիպուելով իւր երեքամեայ զաւակը իւր հօր տունը կը ղրկէ խնամելու և պահպանելու համար։ Քանի մի ժամանակ կը իրնամուի այն տեղ մանուկը և ապա իւր հօրը կը յանձնուի, որպէս ղի գէթ զաւակի աւթիւ պարտաւորի հայրը իւր տունը դառնալ և ամուսնոյն հետ հաշտուիլ։ Բայց սոյն վայրագ և անգութ հայրը մանուկը կ'առնու և տանելով ՚ի գերեզմանատուն կը դնէ գերեզմանական պրի մը մէջ և մրգեղէններով խաբելով ինքն կ'ելնէ և այրի դուռը քարերով կը փակէ, կենդանւոյն թաղելով ինքզ մանուկը։ Թաղման միւս օրը անցաւորները մոնիական խղճալի ձայն մի լըսելով գերեզմանատան մէջ, սոսկալով պրի դուռը կը բանան և արտասուած թոր մանուկը հանելով կը բերեն կը յանձնեն դատարանին։ Զրկար խուզարկութենէ ղկնի մանկան հայրը և մայրը կը գտնուին և բնական հարցափորձէն ղկնի ամեն պարագաներ կ'իմացուին։ Որդեսպան հայրը կը դատաւարտուի և տեղեկագիրը կը ղրկուի Վաճառիտի Առտակալին, որոյ վախճանական վճռոյն կ'ըստատէ այժմ տեղեւոյ Վատարանը։